ՎԱՐԴԱՆԱՆՔ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Կատարող՝ Նարինե Նիազյան

Յ. Լեփսիուսի անվան թիվ 88 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Մարինե Մանուկյան

Երևան -2023

Բովանդակություն

Ա) Նախապրբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները: Ներածություն 2

Բ) Նախապրբենական փուլի նպատակները և դասի մեթոդները 3

- Ուսումնական պաստառներ 4
- Պաստառների իրականացման խաղային բնույթը 5
- Ուսումնական պաստառների կիրառումը 6
- Նախագրային շրջանի դասի մեթոդական մշակում 10
- Նպատակների իրականացման ուղիները լեզվատրամաբանական խաղ–առաջադրանքների օգնությամբ 12
- Նկար–հեքիաթ դասի մշակում 15

Գ) Ամփոփում 15

Դ) Օգտագործված գրականություն 17

Նախադպրոցական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Ներածություն

Նախադպրոցական փուլի հիմնական խնդիրներն են՝ հեքիաթների միջոցով սովորողների ստեղծագործական, տրամաբանական–վերլուծական մտածողության և ուսումնական հմտությունների զարգացումը, բառապաշարի հարստացումը: Նախադպրոցական փուլի նպատակներին հասնելու ուղիները վարժությունների և առաջադրանքների միջոցով երեխաների համապատասխան հմտությունների զարգացումն է: Նմանատիպ առաջադրանքների օրինակներով հարուստ է «Մայրենի» դասագիրքը, սակայն ուսուցիչները ևս պետք է կազմեն՝ իրավիճակին և դասարանի ընդհանուր մակարդակին համապատասխան օրինակներ, որպեսզի իրականացվի նախագրային կրթության արդյունավետությունը: [1]

«Այբբենարանում» զետեղված գրավիչ ու հետաքրքիր հնարքները, բազմաբնույթ առաջադրանքները, զվարթ պատմությունները, գրավիչ գույներով նկար-պատմությունները և բազմաթիվ այլ միջոցները ուսուցումը դարձնում են արագ, հեշտ ու արդյունավետ: Նախադպրոցական փուլի հիմնական նպատակներից մեկը երեխաների երևակայության զարգացումն է: Այդ առումով դասագրքում կան բազմաթիվ ու բազմաբնույթ բնագրեր, նկար-պատմություններ: Նախադպրոցական փուլում «Այբբենարանի» յուրաքանչյուր էջ նկարազարդված է, մեթոդական կառույցը հագեցած է բազմաբնույթ առաջադրանքներով: Յուրաքանչյուր էջ գրավիչ է, հոգեհարազատ է երեխային, ստեղծում է հարմարավետության զգացում, զվարթություն, մտերմիկ տրամադրություն, որն էլ նպաստում է երեխաների

[1] Նախաշավիղ, գիտամեթոդական հանդես N 3, ԿԱԻ, 2017., էջ 3:

ստեղծագործական մտքի զարգացմանը, երևակայությանը և բառապաշարի հարստացմանը: Ամեն ինչ նպատակաուղղված է երեխայի ստեղծագործական երևակայության ու մտածողության խոսքի զարգացմանը, ինքնուրույն ու ինքնավստահ անձի ձևավորմանը:

Բոլոր դասերն այնպես են կառուցված, որ զարգանան երեխաների խոսք կառուցելու ունակությունները, որ նրանք ձեռք բերեն աշխարհաճանաչողական նախագիտելիքներ, որ մասնակցեն իրենց ինքնազարգացմանը:

Այս բոլոր առումներով հաջողության հասնելու համար պետք է հստակ և նպատակաուղղված քայլեր կատարել և մեթոդական մոտեցում ցուցաբերել՝ սկսած Նախապրբենական փուլից:

Նախապրբենական փուլի նպատակները և դասի մեթոդները

Դասավանդման ընթացքում հարկավոր է մեծ ուշադրություն դարձնել դասի պլանավորմանը, որը պետք է ուսուցչի համար ուղղորդող նշանակություն ունենա: Անհրաժեշտ է դասավանդելիս հաճախակի կիրառել համագործակցային մեթոդներ՝ չհրաժարվելով ավանդականից: Այդ մեթոդների նպատակային կիրառումն աշակերտների համար դասերը դարձնում է հետաքրքիր և նպաստում նյութի հեշտ յուրացմանը: Պարտադիր չէ, որ յուրաքանչյուր դասի ընթացքում ուսուցիչն անպայման մի քանի մեթոդ կիրառի: Դրանց կիրառումը պետք է լինի տեղին և նպատակային:

Նախապրբենական փուլի հիմնական նպատակը երեխաներին գրաճանաչության նախապատրաստելն է: Այբբենարանում ներկայացված թեմատիկ նկարները, նկար-պատմությունները, նախադասության և բառի ընդհանրացված գծապատկերները, բառի վանկային և հնչյունային կազմի գծապատկերները խոսքի զարգացման, լեզվական վերլուծությունների ու

համադրությունների, կարդալու կարողության ձևավորման հիմքերն են:

Նախապրբենական բաժինը կառուցված է այնպես, որ երեխաների մեջ արթնացնի հետաքրքրասիրություն, սեր գրքի և դպրոցի նկատմամբ, սովորելու ցանկություն: Հաճույքով կատարելով դասագրքի բազմաբնույթ առաջադրանքները՝ երեխաներն ուժեղ են զգում իրենց, դառնում են զվարթ, շփվող, և նրանց չի լքում հաջողակ լինելու զգացումը:

Նախագրային բաժնի հիմնական նպատակը երեխաներին աստիճանաբար ուսումնական գործընթացի մեջ ներգրավելն է, աննկատ կերպով նրանց ավելի ու ավելի բարդ առաջադրանքների կատարմանը նախապատրաստելը, միաժամանակ, նրանց մտածողության զարգացումը, ստեղծագործական ունակությունների բացահայտումը, ճանաչողական հետաքրքրությունների խթանումը:

Նախապրբենական տետրը հետաքրքրաշարժ է, երեխաները սիրով են կատարում առաջադրանքները: Ձեռքի նրբաշարժումները զարգացնելը և գիտելիք տալը միահյուսված են: Զարգանում է երեխայի տրամաբանական մտածողությունը, ուրիշին օգնելու ցանկությունը, սկսած գործը մինչև վերջ հասցնելը: Յուրաքանչյուր էջ նախատեսված է մեկ տառի գրուսուցման համար: Հետաքրքրաշարժ հարցերով ու խնդիրներով, բազմազան խաղերով տետրերը գրավում են երեխաներին:

- **Ուսումնական պաստառներ:**

Նախապրբենական շրջանում երեխաների մտահորիզոնի զարգացմանը նպաստում են պաստառները: Պաստառներում պատկերված հեքիաթային հերոսները մտերմիկ միջավայր են ստեղծում երեխայի համար: Պաստառները տալիս են հուզականություն և դառնում գիտելիքների ընկալման երաշխիք:

Վեց տարեկանում զարգանում է երեխայի պատկերավոր մտածողությունը: Պաստառներում հաշվի է առնված երեխայի

հոգեկան զարգացման, մտածողության առանձնահատկությունները, և նրանց կրթության կազմակերպման նպատակն ու խնդիրները: Երեխայի պատկերավոր զարգացումը և ուսումնական խնդիրների իրականացումը արդյունավետ են դառնում, երբ կերպարներով հագեցած պաստառների կիրառումը ուղեկցվում է ուսումնական խաղերով: Պաստառներում պատկերված հեքիաթային կերպարները հարազատ միջավայր են ստեղծում երեխայի համար և օգնում երեխային, որ կարողանա դիտարկել լեզվական հասկացությունները:

- **Պաստառների իրականացման խաղային բնույթը:**

Ուսումնական գործունեության տարրերը ծնվում են խաղում: Վեց տարեկան առաջին դասարանցիների կյրթության կազմակերպման առաջին կարևոր պայման կարող ենք նշել խաղային գործունեության գերակայությունը ուսուցման գործընթացում: Վեց տարեկանների հետ աշխատելիս հարկավոր է խաղը դիտարկել որպես ուսումնական խնդրի իրականացման միջոց, որպես ուսումնական գործընթացի կազմակերպման ձև: Խաղային մեթոդը ճանաչողական նշանակություն ունեցող առաջադրանքին խաղային ձև տալն է՝ խաղային տարրեր ներմուծելու ճանապարհով: Հետաքրքիր, ոչ ուղիղ ուսումնական վերնագրերի, խաղային սյուժեների , բովանդակության, դերերի, որոշակի կանոնների կատարման միջոցով կարելի է հասնել նպատակին:

Որպեսզի խաղը դառնա ուսուցման և ուսումնառության մեթոդ և արտացոյվի պաստառներում, ապահովելով երեխաների ուսումնառության հետաքրքրականությունը, հուզական ներգրավվածությունը և մատչելիությունը, անհրաժեշտ է պահպանել մի շարք պայմաններ:

1. Պաստառը պետք է միաժամանակ ունենա ինչպես ուսումնական, այնպես էլ խաղային շերտեր, որոնք կարտացոլվեն ու կբացվեն պաստառի վերնագրում,

բովանդակության գործողությունների տրամաբանության և պահանջների մեջ:

2. Պաստառում ներկայացված ուսումնական խնդիրը, առաջադրանքը չպետք է համընկնի խաղային խնդրի հետ: Երեխային թվում է, թե ինքը խաղում է. նա ավելի ազատ է, հուզականորեն անկաշկանդ, գործողությունների մեջ առավել ինքնավստահ, բայց իրականում ուսումնական խնդիր է լուծում:
3. Պաստառում ներկայացված ուսումնական խնդիրը առաջադրանքը արտաքուստ չպետք է «ճնշի» խաղային խնդիրը, կարևոր է պահպանել խաղային իրավիճակը:
4. Խաղային մեթոդով ստեղծված մեկ առանձին ցուցապաստառ չի կարող ապահովել ուսուցման, ուսումնառության արդյունք: Հարկ է, որ լինի ուսումնական առաջադրանքի աստիճանական բարդացմամբ կառուցված պաստառների համակարգ՝ ծրագրային պահանջներով առաջնորդվող:[2]

Միևնույն պաստառը կարելի է օգտագործել տարբեր նպատակներով, տարբեր ուսումնական խնդիրներ լուծելու համար: Ցուցապաստառի շարժականությունը հնարավորություն է տալիս փոփոխել միևնույն ուսումնական խնդիրը: Բավական է փոխել պաստառի որոշ մանրամասներ, և այն կստանա նոր գրավչություն ու բովանդակություն: Երեխաներին գրավում են վառ, անսովոր գունեղ առարկաներն ու պատկերները:

Անհրաժեշտ է խիստ մտածված ընտրել ու անդրադառնալ կիրառվող ակնառու–տեսողական միջոցներին:

Պաստառները պարունակում են իրականության ամենատարբեր ոլորտների և երեխայի կյանքին ու կարիքներին վերաբերող պատկերազարդ հիմքը և լուծում են ուսումնական տարբեր խնդիրներ, նպաստում են երեխայի լեզվամտածողության,

[2] Վաչագան Ա. Սարգսյան, Այբբենարան, Ուսուցչի ձեռնարկ, Եր. 2015, էջ 36:

գրագիտության, տրամաբանության, երևակայության և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը:

- **Ուսումնական պաստառների կիրառումը:**

Պաստառների հուզական հագեցվածությունը կենսախնդություն, աշխուժություն և ակտիվություն է հաղորդում. թոթափում նրանց հոգնությունը, բարձրացնում աշխատունակությունը, նպաստում ուսումնական նյութի ընկալմանը:

Այս պահանջների իրականացմանը նպաստում են՝

ա)պաստառների սյուժետային–կերպարային բնույթը՝ հագեցված երեխաներին շատ սիրելի ու հարազատ հերոսներով, հեքիաթային պատկերներով, ծանոթ իրավիճակներով:

բ)պաստառների գեղագիտական ձևավորումը, գունեղությունն ու գրավչությունը:

գ)պաստառների խաղային բնույթը, որը տալիս է երեխաների փորձելու և սխալվելու, նորից կրկնելու հնարավորությունը, որն էլ նվազեցնում է սովորողների լարվածությունը:

Դիտարկենք մի քանի պաստառ

1 Բարև՛, ես հնչյունն եմ: Գտի՛ր ինձ:

Այս պաստառը նպաստում է բառը հնչյունական վերլուծության ենթարկելու կարողությունների ձևավորմանը:

Պաստառը քառադրվագ է:

Այս պաստառի միջոցով ուսուցիչը բացատրում է, որ բառի երկարությունը կախված է այն բանից, թե նրա մեջ քանի ձայն կա: Այդ ձայները անվանում են հնչյուն:

Երեխաները անվանում են առաջին դրվագի առարկաները՝ արձան, ձեռք, ձուկ, ձի, ձմերուկ, խնձոր, տանձ: Այնուհետև պարզում են, թե դրվագի մեջ որ հնչյունն է ընդհանուր: Նմանատիպ աշխատանք կատարվում է մյուս երեք դրվագներով:

Չորրորդ դրվագում ընդհանուր է *ու* ձայնավորը. այստեղ գաղափար է տրվում ձայնավոր հնչյունների մասին:

Ուսուցիչը ներկայացնում է երկար ու կարճ բառերը՝ ձմերուկ, ձի, և երեխաների հետ գալիս է այն եզրակացության, որ բառերն էլ կարող են լինել երկար ու կարճ:

2 Պատմություն հնչյուն



Պատմություն հնչյուն պաստառը կօգնի նախապրբենական շրջանում ուսուցանելու պատմություն–նախադասություն–բառ–վանկ–հնչյուն շղթան և հակառակը:

Բոլոր նկարների շուրջ երեխաները կարող են հորինել պատմություններ, պատմությունից առանձնացնել նախադասություններ, բառեր: Այնուհետև բառը ենթարկել հնչյունային վերլուծության և առանձնացնել ձայնավոր ու բաղաձայն հնչյունները:

Այսպիսի աշխատանքը հնարավորություն է տալիս զարգացնելու երեխաների ստեղծագործական երևակայությունը, դիտունակությունը և բառապաշարը:

Ուսուցիչը կազմակերպում է խաղեր բոլոր դրվագների շուրջ, որը նպաստում է երեխաների հաղորդակցական հմտությունների, արտահայտիչ խոսքի, երկխոսելու կարողության:

3 Հեքիաթային խառնաշփոթ:

Հեքիաթային խառնաշփոթ պաստառը նպաստում է պատմության սկիզբ, ընթացք, ավարտ շղթայի յուրացմանը: Հարստացնում է բառապաշարը, զարգացնում է կապակցված խոսք կառուցելու

կարողությունը, ստեղծագործական մտածողությունը և երևակայությունը: Ուսուցիչն առաջարկում է գտնել, թե որ հեքիաթներն են պատկերված, նկարների տակ դրված թվերի միջոցով խմբավորեն հեքիաթները: Երեխաները փորձում են նաև վերարտադրեն այն հատվածները, որոնք պատկերված չեն պաստառում: Կարող են նաև ներմուծել նոր հերոսներ, փոխել հերոսներին, ստեղծագործաբար շարունակել հեքիաթը:

Ներառարկայական կապերն ապահովելու նպատակով ուսուցիչն առաջարկում է կերպարվեստի ժամերին նկարեն այդ հատվածները:

«Այբբենարանի» նախագրային և «Մաթեմատիկայի» նախաթվային բաժինները որոշ չափով համընկնում են: Երկու դեպքում էլ երեխաները պատրաստվում են առավել լուրջ ուսումնական գործընթացի՝ մի դեպքում տառեր և գործողություններ նրանց հետ, մյուս դեպքում՝ թվեր և գործողություններ:

Այդ ընդհանրությունը հնարավորություն է ընձեռում, որ երեխաները նույն երևույթին տարբեր տեսանկյուններից նայեն, հաճախ կրկնեն նաև անցած նյութը, ամրապնդեն ձեռք բերած գիտելիքները:

- **Նախագրային շրջանի դասի մեթոդական մշակում:**

Նախագրային շրջանում երեխաները ծանոթանում են կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներին, կատարում են զանազան համեմատություններ, գտնում են առարկաների նմանություններն ու տարբերությունները, սովորում են երկարատև և լարված առաջադրանքներ կատարել: Զարգանում է նրանց հնչյունաձայնային լսողությունը, բառից հնչյունը առանձնացնելու կարողությունը, լսելու և խոսք կառուցելու հմտությունը:

Ներկայացնենք նախագրային շրջանի դասերից մեկի մշակումը:

Առարկաների ձևերն ու գույները

Վեց տարեկան երեխաները արդեն ունեն գիտելիքների որոշ պաշար, ունեն իրենց կենսափորձը, սիրում են դիտել նկարներ, հեքիաթներ լսել, նկարել, համակարգչային խաղեր խաղալ: Մեծ մասը գիտե հիմնական գույների անվանումները, ծանոթ է երկրաչափական պատկերներին: Այս դասի նպատակն է համակարգել նրանց ունեցած գիտելիքները գույների և առարկաների ձևերի մասին:

Ուսուցիչը հանձնարարում է ուշադիր դիտել նկարը և նկարագրել, թե այնտեղ ինչ է պատկերված: Կարևոր է ոչ միայն, որ երեխաները առարկաները տարբերեն ըստ գույների, ըստ ձևի, ըստ հատկանիշների, այլ նաև, որ երեխաները կարողանան այդ հատկանիշները օգտագործեն որևէ առարկա, առարկաների խումբ փնտրելու և ընտրելու, ըստ այդ հատկանիշների առարկաները խմբերի բաժանելու համար:

Դասը սկսվում է մարդկանց մասնագիտությունների թվարկումով, այնուհետև թվարկում են պատկերված նկարները: Ուսուցիչը հարցնում է, թե ով է բժիշկը, ինչ է անում նա: Երեխան բացահայտում է իր իմացածը և ներկայացնում:

Երեխաները թվարկում են, թե ինչ գույներ կան բժշկի հագուստի վրա, նույն բնույթի աշխատանք է կատարվում զինվորի, Ձմեռ Պապիկի և պարուհու նկարների շուրջ: Ուսուցիչն առաջարկում է նայել ներքևի շարքի նկարներին և ասել, թե ովքեր են պատկերված այդ նկարներում, ինչով են տարբերվում վերևի շարքի նկարներից: Հնարավո՞ր է այդ տարբերությունները վերացնել, ինչպե՞ս: Ուսուցիչը առաջարկում է ներկել ուրվապատկերները: Այս աշխատանքը զարգացնում է երեխաների տեսողական ընկալումը, ուշադրությունը, կենտրոնանալու կարողությունը: Երեխաները սովորում են ձեռքերի շարժումները կատարել որոշակի գծերի սահմաններում:

Նկարում պատկերված յուրաքանչյուր գույնի առարկաները թվելուց հետո, ուսուցիչը առաջարկում է թվել այդ գույնի ուրիշ առարկաներ, որոնք չկան նկարում: Ըստ երեխաների ցանկության հերթով թվարկում են բոլոր գույնի առարկաները: Կապույտ՝ գնդակ, ծաղիկ, մատիտ, բաժակ, թիթեռ, երկինք, գտնում ենք առարկաներ մյուս գույներով:

Ներքևի շարքում նկարված են մրգեր՝ բանան, խաղող, բալ, խնձոր, ելակ, տանձ, կիտրոն: Եևրեխաները պետք է ասեն, թե ինչ մրգեր են պատկերված և յուրաքանչյուրը ինչ գույնունի: Դրանք պետք է անվանել մեկ բառով: Եթե երեխաները դժվարանան պատասխանել, պետք է դիմել նրանց կենսափորձին: Հարցերի միջոցով օգնել երեխաներին: Այնուհետև ներկում են յուրաքանչյուր միրգ ըստ նշված գույնի, որը նպաստում է դաստակի և մատների նրբաշարժումների զարգացմանը:

- **Նպատակների իրականացման ուղիները լեզվատրամաբանական խաղ–առաջադրանքների օգնությամբ**

Նախապրբենական փուլը պետք է բաժանել ըստ հիմնական նպատակների և այդ ուղղությամբ կատարել որոշակի գործողություններ:

Նախապրբենական փուլի կազմակերպման առաջին գործողությունը երեխաների ուշադրությանը միտված վարժությունների կազմակերպումն է: Պետքբէ բերեխաներին առաջադրել նախ հեշտ վարժություններ, ապա՝ աստիճանաբար ավելի բարդ տարբերակներ:

Լեզվատրամաբանական խաղ–առաջադրանքները զարգացնող բնույթ ունեն և նպատակաուղղված են երեխաների մեջ հետաքրքրություն սերմանելու ուսման նկատմամբ, ուսուցումը ավելի զվարթ դարձնելու, հետաքրքրություն առաջացնելու սովորելու նկատմամբ: Այդ խաղերի միջոցով կազմակերպվում ու կարգավորվում են երեխաների վարքն ու գործողությունները,

նրանք դառնում են նստունակ, ձևավորվում են նրանց կամային հատկանիշները:

Դասարանում մեծ աշխուժություն են առաջացնում **«Սխալ – ճիշտ»** բնույթի խաղ–առաջադրանքները: Նպաստում է բանավոր խոսքի զարգացմանը, աշխարհաճանաչողական նյութ է պարունակում, զարգացնում դիտողունակությունը, պատկերային մտածողությունը, հումորի զգացումը, արագ կողմնորոշվելու ունակությունը, համադրելու կարողությունը:

Ո՞րն է **«Ավելորդը»:** Այս առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է բառերից առանձնացնել մեկը, որը չի համապատասխանում մնացածներին, մյուսները իրար հետ կապված են որևէ ընդհանուր հատկանիշով: Խաղը նպաստում է առարկաները ըստ հատկանիշի խմբավորելու երեխաների կարողության զարգացմանը:

Վանկախաղ: Տվյալ վանկերով անհրաժեշտ է կազմել բառեր: «Վանկախաղը» նպաստում է վանկերը մեկ շնչով միանգամից կարդալու երեխաների հմտության, կարդացած վանկը մտապահելու ունակության զարգացմանը:

«Ո՞ր բառերն են «ընկերներ»: Այս առաջադրանքը նպատակաուղղված է երեխաների տրամաբանական մտածողությանը: Զարգացնում է երեխաների ստեղծագործական մտածողությունը, երևույթների ընկալումը դարձնում է նպատակաուղղված:

«Շարունակի՛ր»: Երեխան կատարում է տրամաբանական որևէ օրինաչափություն գտնելու և ըստ այդ օրինաչափությամբ առաջադրանքը շարունակելու աշխատանք: Այս խորագրով առաջադրանքներ կան թե՛ հնչյունի (տառի) մասին երեխաների գիտելիքների ձևավորման ու ամրապնդման ուղղությամբ: Զարգացնում է մտածողությունը, ուշադրությունը, հիշողությունը:

«Գտի՛ր զույգը»: Ուղղված է ուշադրության կենտրոնացմանը: Երեխաներին առաջարկում են տարբեր

պատկերներ, որոնցից պետք է գտնել չափով, ձևով, գույնով նման պատկերներ:

«Ո՞ր չես տեղադրի»: Առաջադրանքը նպաստում է ուշադրության և մտածողության զարգացմանը: Սովորողը պետք է նշի այն առարկան, որը չի կարելի կամ չի կարող տեղադրել զամբյուղի, պայուսակի, արկղի կամ պահարանի մեջ:

«Գտի՛ր պակասող դրվագը»: Երեխաները պատմություն են հորինում թեմատիկ նկարի շուրջ: Նրանք որոշում են, թե որ դրվագներից է բաղկացած նկար–պատմությունը, նշում են այն դրվագը, որը պակասում է թեմատիկ նկարում:

«Գտի՛ր տարբերությունը»: Առաջադրանքն իրենից ներկայացնում է համադրելու և հակադրելու, համեմատելու մտավոր գործողություն, ինչը խթանում է իմացական ակտիվությանը և մտածողության զարգացմանը: Երեխաները պետք է նշեն, թե որ զույգի նկարներն են միմյանցից տարբերվում:

«Ո՞ր դրվագն է առանձնացված»: Թեմատիկ նկարի շուրջ երեխաները հորինում են պատմություն: նրանք որոշում են, թե որ դրվագերից է բաղկացած նկար–պատմությունը, նշում են այն դրվագը, որն առանձնացված է տրված նկար–պատմությունից: Առաջադրանքը զարգացնում է նախադասությունները պատմությունից առանձնացնելու ունակությունները:

«Ո՞ր գծապատկերն է համապատասխանում»: Պատմության գծապտկերը մեծ ուղղանկյուն է, որը բաժանված է մասերի: Նախադասության գծապատկերն ուղղանկյուն է, որի սկիզբը տրվում է մի փոքր հոծ գծով և բարձր, վերջում վերջակետ:

«Դասավորի՛ր ճիշտ հաջորդականությամբ»: Աշակերտը պետք է նշի այն շարքը, որտեղ նկարները դասավորված են տրամաբանական հաջորդականությամբ: Մյուս փուլի համար ուսուցիչը սովորեցնում է բառեր, հնչյուններ, վանկեր, ձայնավորներ և բաղաձայններ: Այդ նպատակի իրականացման համար պետք է ընտրել որոշակի վարժություններ, գնալով

բարդացնել, որպեսզի երեխաների մեջ զարգանա տեսական, վերլուծական, մեկնաբանական մտածողություն:

«Բառ–նկար»: Տրամաբանական բնույթի վարժություն է: Նախադասությունը վերլուծելու և նրա բաղադրիչները դիտարկելու միջոցով աշակերտներին գաղափար է տրվում բառի մասին՝ որպես նախադասության բաղադրիչ մաս և որպես որևէ կոնկրետ իմաստ արտահայտող առանձին լեզվական միավոր: Նշվում է այն նկար–բառը, որն առանձնացվել է նկար–պատմությունից:

«Ո՞ր պատկերն է բացակայում»: Դիտելով նկարը, սովորողները պետք է նշեն այն պատկերը, որը ներկայացված չէ թեմատիկ նկարում: Առաջադրանքը կատարելիս նրանք ընկալում են, որ բառը կոնկրետ իմաստ արտահայտող լեզվական միավոր է: Զարգացնում է ուշադրությունը:

- **Նկար–հեքիաթ դասի մշակում:**

Նախագրային փուլի աշխատանքները ներառում են հեքիաթների, հանելուկների, բանաստեղծությունների, խաղիկների շարք, որոնց միջոցով հնարավոր է դառնում հասնել հիմնական նպատակին: Ուսուցիչը ներկայացնում է Հովհ. Թումանյանի «Ծիտը» հեքիաթը: Տեղեկություններ է տալիս գրողի, լավաշի, թոնրի, հովվի, սազի մասին: Հեքիաթի նկարաշարը մի տեսակ շեմ է մանկական հեքիաթային աշխարհից դեպի մանկական ուսումնական աշխարհ, երեխայից դեպի աշակերտ: Բոլոր աշակերտները պետք է ըստ նկարների պատմեն նկարաշարի բովանդակությունը. սա բանավոր խոսքի զարգացման սկիզբն է: Երեխաները լսում են հեքիաթը, քննարկում են, նկարագրում հերոսներին և ներկայացնում դերային խաղով: Երեխաները պետք է ընկալեն, որ ամբողջական պատմությունը կազմված է դրվագներից, և յուրաքանչյուր դրվագ բաղկացած է նախադասություններից:

Երեխայի մտքում մնում է այն, ինչ անցել է նրա սրտով: Եթե երեխան զվարթ է սովորում, նա ավելի լավ է սովորում, հետաքրքրասիրությունը ամենամեծ խթանն է, այն երեխային կդարձնի իսկական ստեղծագործող անհատ:

Ամփոփում: Նախագրային շրջանում երեխաները ծանոթանում են կենդանական և բուսական աշխարհին, կատարում համեմատություններ, գտնում առարկաների նմանություններն ու տարբերությունները, վարժվում են երկարատև և լարված աշխատել որևէ առաջադրանք կատարելիս: Սովորում են գտնել, թե որ առարկաներն են «ընկերներ»: Վարժվում են մտնել և դուրս գալ բավիղներից: Առարակների միջից գտնում են «ավելորդը», առարկաները դասակարգում ըստ որևէ հատկանիշի, նկարում առարկաների պակասող մասերը, գունավորում ու գծում՝ կատարելագործելով դաստակի ու մատների նրբաշարժումները: Նրանք վարժվում են առանձնացնել պատությունից նախադասություն, նախադասությունից՝ բառ, բառերը վանկատել և ենթարկել հնչյունային վցերլուծության: Իմանում են, թե ինչ է գծապատկերը, վանկային կորը, հնչյունը, ճանաչում են ձայնավոր հնչյունները, տեղեկանում են վանկերի մասինք: Զարգանում է նրանց հնչյունաձայնային լսողությունը, բառից այս կամ այն հնչյունը առանձնացնելու կարողությունը, լսելու և խոսք կառուցելու կարողությունը: Սովորում են անվանել նկարում պատկերված առարկաները, կազմել նախադասություններ ըստ նկարների, հորինել պատմություններ, «կարդալ» նկարաշարեր, նախադասություններն ու բառերը ներկայացնել գծապատկերով: Այս ամենը կատարվում է երեխաների համար հոգեհարազատ միջավայրում, որն ստեղծում է դասագիրքը՝ իր գունագեղությամբ, հետաքրքիր առաջադրանքներով, խաղային հնարներով:

Նախագրային փուլի ավարտին երեխաներ նախապատրաստվում են սովորելու հայերենի տառերը:

Այսպիսով, նախապայմանական փուլի հիմնական խնդիրներն են՝ աշակերտի ստեղծագործական–երևակայական մտածողության ձևավորումը, բանավոր խոսքի զարգացումը, բառապաշարի հարստացումը, տրամաբանական–վերլուծական մտածողության զարգացումը:

Օգտագործված գրականություն

1. Կրուտեցկի Վ. Ա., Մանկավարժական հոգեբանության հիմունքները, Երևան, «Լույս հրատ.», 1976:
2. Նախաշավիղ, գիտամեթոդական հանդես, N 3, ԿԱԻ, 2017:
3. Սարգսյան Վ. Ա., Այբբենարան, Մանմար, Երևան, 2021:
4. Սարգսյան Վ. Ա., Այբբենարան, Ուսուցչի ձեռնարկ, Մանմար, Երևան, 2015:
5. Սարգսյան Վ. Ա., «Խաղ և ուսուցում», Խաղային տեխնոլոգիաների կիրառումը դպրոցում, «Նարեկ», 2012:
6. Սարգսյան Վ. Ա., Պատկերագիր այբուբեն, Երևան, Մակմիլան–Արմենիա հրատ., 2005:
7. Սարուխանյան Ս. և ուրիշներ, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, ԿԱԻ, 2008:
8. Վարդումյան Ս. և ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Այրեքս, Երևան, 2003:
9. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի համար, Երևան, Լույս հրատ., 1980:
10. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Ա., Մարտիրոսյան Լ., Այբբենարան, մեթոդական ուղեցույց, Երևան, Լույս հրատ., 2001: